ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«29» ապրիլի 2016 թվականի N 31 ք.Գյումրի

ՏԻԳՐԱՆ ԳՈՒԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 46-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված համապատասխանության աուդիտի 2016 թվականի ապրիլի 14-ի հաշվետվությունը և հաշվի առնելով Տիգրան Գուլյանի 2016 թվականի ապրիլի 18-ի բացատրագրերը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տիգրան Գուլյանին հայտարարել նկատողություն:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տիգրան Գուլյանին՝ մեկամսյա ժամկետում վերացնել արձանագրված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սեյրան Պետրոսյանին:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է